ՀՀ Արմավիրի մարզի Արտամետի գյուղապետարանը (Բաղ.տ/2)հայտարարում է մրցույթ համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության 1-ին կարգի մասնագետի (ծածկագիր՝3.2-1)թափուր պաշտոն զբաղեցնելու համար

1-ին կարգի մասնագետը կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը,պարբերաբար կազմակերպում է սպորտային միջոցառումներ,իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոն զբաղեցնելու համար պահանջվում է .

.Միջնակարգ կրթություն,

*Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի<բ>ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Նշված թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 13.12.2013թ. Արտամետի գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

.դիմում մրցույթային հանձնաժողովի անունով(ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

.տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումն հաստատող փաստաթղթերը՝

Դիպլոմի ,վկայականի,աշխատանքային գրքույկի (բացակայության դեպքում տեղեկանք համապատասխան մարմնից)պատճենները բնօրինակի հետ միասին,

*արական սեռի դիմորդները զինվորական գրքույկի կամ դրան փոխորինող վկայականի հետ միասին,

.մեկ լուսանկար՝ 3X4 չափսի,

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 3-ի N310-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդությունների բացակայության մասին հայտարարություն:

Մրցույթին մասնակցել ցանկացողները փաստաթղթերը ներկայացնելու,լրացուցիչ տեղեկություններ ստանալու,ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Արտամետի գյուղապետարան կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳԱՏԾ վարչություն,ամեն օր ժամը 9:00-ից բացի շաբաթ և կիրակի օրերից:

Հեռ.(0231) 2-07-70:Դիմումների վերջին ժամկետն է 03.12.2013թ.